

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում»-ՆՈՐԿԵՆՏ ծրագրի շրջանակներում ՇՊՀ-ում նախատեսված «Կայուն տորիզմի զարգացում» դասընթացի էլեկտրոնային տարբերակի պատրաստման, էլեկտրոնային ուսուցման համակարգում տեղադրման և սպասարկման համար խորհրդատվական ծառայությունների տրամադրման անհատ խորհրդատուի մրցույթ

11 հունվարի 2019թ.

Ծրագրի անվանումը. «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում»-ՆՈՐԿԵՆՏ (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի նպատակն է տարածաշրջանային մարտահրավերներին և աշխատաշուկայի պահանջներին ու հեռանկարներին համահունչ դասընթացների, ծառայությունների և կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով Շիրակի պետական համալսարանի /ՇՊՀ/ հզորացումը՝ ուղղված Շիրակի մարզի համաչափ զարգացմանը:

Շիրակի պետական համալսարանը հայտարարում է «Կայուն տորիզմի զարգացում» դասընթացի էլեկտրոնային տարբերակի պատրաստման, էլեկտրոնային ուսուցման համակարգում տեղադրման և սպասարկման համար խորհրդատվական ծառայությունների տրամադրման անհատ խորհրդատուի ընտրության մրցույթ:

Անհատ խորհրդատուի աշխատանքի նկարագրի, գործունեության շրջանակի, պահանջվող որակավորման, փորձի, ինչպես նաև գնահատման չափանիշների նկատմամբ ներկայացվող պահանջներն են՝

- ✓ ուսումնասիրել ՇՊՀ-ի համապատասխան չափորոշչային փաստաթղթերը, ինչպես նաև առկա և ՆՈՐԿԵՆՏ ծրագրով նախատեսված նյութատեխնիկական բազան,
- ✓ ուսումնասիրել ՇՊՀ-ում ՆՈՐԿԵՆՏ ծրագրով նախատեսված և իրականացված հեռաուսուցման դասընթացի կազմակերպման ու իրականացման գործընթացների հայեցակարգային ծրագիրը և ուսումնական նյութերը,
- ✓ ուսումնական նյութերի մշակման աշխատանքներն իրականացնել՝ համագործակցելով բազմամասնագիտական թիմի մյուս խորհրդատուների հետ,
- ✓ համագործակցել ՆՈՐԿԵՆՏ ծրագրի ղեկավարի հետ՝ 30 շահառուների կարիքների և կարողությունների ուսումնասիրման գործընթացում,
- ✓ համագործակցել ՆՈՐԿԵՆՏ ծրագրի ղեկավարի հետ՝ մասնակցելով դասընթացի արդյունավետության գնահատման աշխատանքներին,
- ✓ ուսումնասիրել «Կայուն տուրիզմի զարգացում» դասընթացի էլեկտրոնային տարբերակի պատրաստման, մասնագիտական ծրագրային միջոցների կիրառմամբ էլեկտրոնային ուսուցման համակարգում տեղադրման և սպասարկման տեղական և միջազգային փորձը,
- ապահովել «Կայուն տուրիզմի զարգացում» դասընթացի բովանդակության տեխնիկական ձևայնացումը՝ համապատասխան պատասխանատուի կողմից տրված բովանդակությամբ,
- ապահովել հեռաուսուցման հարթակում փոխներգործուն և մոտիվացնող դասընթացի տեղադրումը, տեխնիկական մշակումն ու փորձարկումը,
- ընտրել և կիրառել գործիքակազմ, որն անհրաժեշտ է տեղեկատվության (առաջադրանք, կատարված առաջադրանքի վերանայված տարբերակ և այլն) տարածման ու հաղորդակցման համար,
- վերանայել և բարելավել հեռաուսուցման հարթակում տեղադրված էլեկտրոնային դասընթացի տեխնիկական բնութագրիչները՝ նկատի առնելով ՆՈՐԿԵՆՏ ծրագրի ղեկավարի մշտադիտարկման և ՇՊՀ-ի ղեկավար կազմի հետ քննարկման արդյունքները:

Խորհրդատուի որակավորման նվազագույն պահանջները և գնահատման չափանիշները.

№	Անվանումը	Պահանջը	Միավորը
1.	Որակավորում	<ul style="list-style-type: none"> ✓ Համապատասխան ոլորտում մագիստրոս և/կամ դիպլոմավորված մասնագետ, ✓ հեռուսուցման բնագավառում համապատասխան հավաստագիր ունենալը ցանկալի է: 	20
2.	Ընդհանուր աշխատանքային փորձ	<ul style="list-style-type: none"> ✓ էլեկտրոնային ուսուցման դասընթացների պատրաստման ծրագրային միջոցների և գործիքների հետ աշխատանքի փորձ՝ Exelearning, CourseLab, Ispring /ՇՊՀ-ում աշխատանքային փորձը կհամարվի առավելություն/, ✓ Հեռուսուցման և էլեկտրոնային ուսուցման հարթակների հետ աշխատանքի փորձ, ✓ Համապատասխան ծրագրային միջոցներով էլեկտրոնային ուսուցման դասընթացների պատրաստման փորձը ցանկալի է, ✓ անհատական և թիմային աշխատանքի փորձ: 	40
3.	Հատուկ աշխատանքային փորձ	<ul style="list-style-type: none"> ✓ Ինքնաստուգման և գնահատման էլեկտրոնային ծրագրային միջոցների՝ Ispring, HotPot, MyTestx Pro, Easy Quizzzy իմացություն, ✓ HTML լեզվի հետ աշխատելու, MOODLE համակարգում դասընթացներ պատրաստելու և տեղադրելու փորձ, ինչպես նաև S.C.O.R.M. /Sharable Content Object Reference Model/ Ֆորմատի դասընթացների պատրաստման 	40

		փորձ, ✓ Առցանց հաղորդակցման ծրագրային միջոցների և գործիքների (Skype, IRC, OoVoO, Webinar) իմացություն, ✓ Ամպային տեխնոլոգիաների հետ աշխատելու հմտություններ, ✓ Էլեկտրոնային ուսուցման ծրագրային միջոցների օգնությամբ դասընթացների պատրաստման և տեղադրման փորձը ցանկալի է, ✓ CamStudio, Edilim ծրագրերի իմացությունը կղիտվի որպես առավելություն:	
	Ընդամենը՝		100

Խորհրդատուի աշխատանքի կատարման ժամանակահատվածը՝ 2 ամիս:

Անհատ խորհրդատուի ընտրության մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ պետք է ներկայացնեն.

- դիմում (ձևը կցվում է)
- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկով սահմանված «Անհատ խորհրդատուների ընտրության» մեթոդի:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու կամ հետաքրքրվածության հայտը ներկայացնելու համար դիմել հետևյալ հասցեով կամ էլ. փոստով. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ (ՀՀ, ք. Գյումրի, Պարույր Սևակի 4, Բ2-12 սենյակ), gspi1934@mail.ru, հեռախոս՝ 093-853-706:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2019 թվականի հունվարի 18-ը, ժամը 17:00 ներառյալ:

ՀՀ ԿԳՆ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն, ք.Գյումրի, փ.Պարույր Սևակի 4

Դիմող՝ _____

Հեռ. _____

Էլ. Փոստ _____

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցելու «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում»-ՆՈՐԿԵՆՏ ծրագրի շրջանակներում անցկացվող

անհատ խորհրդատուի ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ պահանջվող տեղեկատվությունը:

Դիմող՝ _____ / _____ /

(ստորագրություն)

« ____ » _____ 2019 թ.